

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ

**Ստուգաթերթ N 32**

**Վնասակար թափոնների մշակում և ոչնչացում  
Թափոնների վնասազերծում և այլ մշակում  
(ՏԳՏԴ ծածկագիր՝ 38.22.0, 39.00.0)**

\_\_\_\_\_ (տեսչության տարածքային մարմնի անվանումը)

\_\_\_\_\_ (գտնվելու վայրը)

\_\_\_\_\_ (հեռախոսահամարը)

\_\_\_\_\_ (ստուգող անձի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ազգանունը, անունը, հայրանունը)

\_\_\_\_\_ (ստուգող անձի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ազգանունը, անունը, հայրանունը)

\_\_\_\_\_ (ստուգող անձի պաշտոնը)

\_\_\_\_\_ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ստուգման սկիզբը (ամսաթիվը) \_\_\_\_\_ ավարտը \_\_\_\_\_

\_\_\_\_\_ (տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

\_\_\_\_\_ (ՀՎՀՀ-ն)

\_\_\_\_\_ (տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

\_\_\_\_\_ (հեռախոսահամարը)

\_\_\_\_\_ (տնտեսավարող սուբյեկտի ղեկավարի կամ լիազորված անձի ազգանունը, անունը, հայրանունը)

\_\_\_\_\_ (հեռախոսահամարը)

Ստուգման հանձնարարագիր \_\_\_\_\_ ում կողմից \_\_\_\_\_ երբ է տրված \_\_\_\_\_

Ստուգման նպատակը /Ընդգրկված հարցերի համարներ \_\_\_\_\_

N	Հարց	այո	ոչ	չ/այ	կշիռ	հղում համապատասխան փաստաթղթին	Ստուգման մեթոդ	մեկնաբանություն
1	Վտանգավոր քիմիական թափոնների ժամանակավոր կուտակման պայմանները սահմանվում են տեխնիկական կանոնակարգում՝ ելնելով թափոնների վտանգավորության դասից, փաթեթավորման եղանակից (տեսակից), հաշվի առնելով թափոնի ազդեցատային վիճակը և տարայի հուսալիությունը: <b>Նշում 1</b>				3	Հղում 1, 18, 19, 20, 21, 22 կետեր,	Փաստաթղթային, Տեխնիկական կանոնակարգ	
2.	Վտանգավոր քիմիական թափոնների տեղակայումը ռեյիեֆի բնական կամ արհեստական իջվածքներում (հորեր, փոսորակներ, քարհանքներ և այլն) իրականացվում է նախագծային փաստաթղթերի հիման վրա, որում տրված է համապատասխան հիմնավորում, որ այն բացասական ազդեցություն չի ունենա շրջակա միջավայրի և բնակչության առողջության վրա:				3	Հղում 1, 18, 19, 20, 21, 22 կետեր	Նախագծային փաստաթղթեր	
3.	Վտանգավորության տարբեր դասերի քիմիական թափոնների միաժամանակյա պահպանումը և կուտակման առավելագույն սահմանային քանակության որոշումը հիմնավորված է սահմանված կարգով: <b>Նշում 2</b>				3	Հղում 1, 23, 24, 26, 27, 28 կետեր	տեխնիկական փաստաթուղթ,	
4.	Կազմակերպության տարածքում վտանգավոր քիմիական թափոնների սահմանային կուտակման չափանիշը ապահովված է՝ օդում մինչ 2 մ բարձրության վրա տվյալ թափոնի համար սպեցիֆիկ վնասակար նյութերի պարունակությունը աշխատանքային գոտու օդի համար սահմանված ՍԹԿ-ի 30%-ից ոչ ավելի է:				3	Հղում 1, 25 կետ	լաբորատոր	
5.	Վտանգավոր քիմիական թափոնների ոչնչացման, վնասագերծման տեխնոլոգիաներ կիրառող ու թաղման օբյեկտների տեղակայումը, կառուցվածը համապատասխանում է սահմանված պահանջներին: <b>նշում 3</b>				3	Հղում 1, 34, 35, 36 կետեր	Փաստաթղթային,	
6.	Կազմակերպությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված է վտանգավոր թափոնների վերամշակելու, վնասագերծելու, պահպանելու, փոխադրելու և/կամ տեղադրելու համար:				3	Հղում 2. Կետ 42.	Փաստաթղթային,	

7.	Բժշկական թափոնների բեռնաթափում աղբավայրերի մակերեսներին չի կատարվում: <b>Նշում 4</b>				3	Հղում 2. Կետ 43, 44.	տեսողական	
8.	Բժշկական թափոնների փոքր քանակություններ առաջացնող (ամիսը 50 կգ-ից քիչ) կազմակերպության տարածքում կամ մեկ այլ հատուկ հատկացված տարածքում, հատուկ պատրաստված փոսերի մեջ բժշկական թափոնները թաղվում են սահմանված կարգով: <b>Նշում 5</b>				3	Հղում 2. Կետ 45, մեթոդական ուղեցույց կետ 23,	տեսողական	
9.	Բժշկական թափոնները վնասազերծող, կազմակերպության տնօրենը ընդունել է բժշկական թափոնների անվտանգ գործածությունը կարգավորող գործողությունների իրավական ակտ, որով կարգավորվում են բժշկական թափոնների տեղափոխման, ընդունման, վնասազերծման ընթացակարգերը, աշխատողների աշխատանքային պարտականությունները, ներառված է ուսուցանումների, աշխատանքի անվտանգության ծրագրեր: <b>Նշում 6</b>				3	Հղում 4, կետ 12, ուղեցույց, կետ 4, 8, 35, 45,	փաստաթղթային	
10.	Կազմակերպության այն աշխատողները, որոնց աշխատանքային պարտականությունները առնչվում են բժշկական թափոնների գործածության հետ, մինչև իրենց աշխատանքային պարտականություններին անցնելը անցել են բժշկական թափոնների անվտանգ գործածության պահանջների ուսուցում, ինչպես նաև ծանոթացել են Ակտի պահանջներին:				3	Հղում 4, կետ 14, 15	Փաստաթղթային, հարցում	
11.	Պահվող բժշկական թափոնները հերմետիկորեն փակված են, ունեն համապատասխան պիտակավորում և պահվում են առանձին՝ ըստ տեսակների՝ բացառելով դրանց միմյանց խառնվելը: <b>Նշում 7</b>				3	Հղում 4, կետ 18, 19, 20, 21, 22, 23, 25, 26	Տեսողական հարցում	
12.	Տարողությունների վնասվելու հետևանքով բժշկական թափոնների արտահոսքի դեպքում թափոնների հետ շփում ունեցած բոլոր մակերեսները ախտահանվում են: Համապատասխան տեղերում տեղադրված են պատահարների դեպքում վարակիչ, քիմիական /սնդիկ և այլն/ թափոնների թափվածքը մաքրելու համար հատուկ հավաքածուներ: <b>Նշում 7</b>				3	Հղում 4, կետ 28, ուղեցույց կետ 36	Տեսողական հարցում	

13.	Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքը՝					Հղում 4, կետ 34	Տեսողական	
13.1	պաշտպանված է մթնոլորտային տեղումներից և այլ գործոնների ուղղակի ազդեցությունից՝ /քամի, արևի ճառագայթներ/, չունի ջրականգեր.				1			
13.2	մշտապես մաքրվում է և զերծ է թափված աղբից				1			
13.3	ախտահանվում է պարբերաբար՝ առնվազն շաբաթը մեկ անգամ, ինչպես նաև արտահոսքի յուրաքանչյուր դեպքում.				1			
13.4	բացառվում է կենդանիների, այդ թվում միջատների և կրծողների, շփումը բժշկական թափոնների հետ, ինչը ապահովելու համար պարբերաբար իրականացվում է միջատասպան (դեզինսեկցիա) և կրծողասպան (դեռատիզացիա) միջոցառումներ.				1			
13.5	բացառվում է կողմնակի անձանց մուտքը.				1			
13.6	ապահովված է ջրի ծորակով և ջրահեռացման գծով.				1			
13.7	պատերն ու հատակն ունեն անջրաթափանց ծածկույթ.				1			
14.	Բժշկական թափոնների գործածության Ծրագրով սահմանված ժամանակացույցի կատարման նպատակով վարում են հատուկ մատյաններ: Մատյանները համարակալված և կնքված են կազմակերպության տնօրենի կողմից:				2	Հղում 4, կետ 37, 38	Փաստաթղթային	
15.	Բժշկական թափոնների վնասագերծումը այրման վառարանում իրականացնելու դեպքում ապահովում են վերահսկում և մշտադիտարկում, դրանց վերաբերյալ առկա են գրանցումներ: Առկա են շրջակա միջավայրի մշտադիտարկման կեղտաջրի, մթնոլորտի/ մշտադիտարկման արձանագրություններ: <b>Նշում 8</b>				3	Հղում 4, ուղեցույց կետ 25	Փաստաթղթային	
16.	Աշխատողներն ապահովված են սանիտարակենցաղային հարմարություններով, որում ներառվում է՝					Հղում 6, կետ 11-ի 2) ենթակետ	տեսողական	
16.1	Հանդերձարանը՝ երկտեղանոց				1			

	հանդերձապահարաններով						
16.2	Զուգարանը, որի հատակի, առաստաղի, պատերի մակերեսները հարթ են, երեսապատված անջրաթափանց, խոնավության նկատմամբ կայուն նյութերով, որոնք ենթակա են մաքրման և ախտահանման:			1			
16.3	Հանգստի սենյակը			1			
16.4	Հանդերձարանում իրականացվում է ջեռուցում և օդափոխություն			1			
16.5	Ցնցուղարանը՝ յուրաքանչյուր 7 մարդուն մեկ ցնցուղ հաշվարկով:			2			
17.	Աշխատակիցներն ապահովված են՝				Հղում 1, կետ 84, 88, 89, 90	տեսողական	
17.1	ըստ աշխատանքի բնույթի անձնական պաշտպանիչ միջոցներով՝ դիմակով, ռետինե ձեռնոցներով, գոգնոցով, երկարաճիտ կոշիկներով, ունիվերսալ դիմակներով կամ հակագազով: <b>Նշում 9</b>			3			
17.2	Անհատական պաշտպանության միջոցներն օգտագործվում են դրանց օգտագործման հրահանգին համապատասխան, որի վերաբերյալ կատարվում է անհրաժեշտ հրահանգավորում:			3			
17.3	Անհատական պաշտպանության միջոցները պահվում են հատուկ առանձնացված մաքուր չոր սենյում առանձին պահարաններում:			1			
17.4	Անհատական պաշտպանության միջոցներն օգտագործվում են դրանց օգտագործման հրահանգին համապատասխան, որի վերաբերյալ կատարվում է անհրաժեշտ հրահանգավորում:			3			
18.	Ունեն լվացարան, որը ապահովված է՝				Հղում 6. Կետ 15	տեսողական	
18.1	հոսող ջրով,			3			
18.2	հեղուկ օճառով,			2			
19.	Սանիտարական սարքավորումների, լվացարանների, հատակի, պատերի ախտահանման աշխատանքները կատարվում են սահմանված կարգով: <b>Նշում 10</b>			2	Հղում 6. Կետ 21	տեսողական	
20.	Աշխատակիցների համար ապահովվում են առաջին բուժօգնության արկղիկով:			3	Հղում 1, կետ 84	տեսողական	
21.	Վարչակենցաղային շենքերին տրվող խմելու ջրի որակը համապատասխանում է նորմերին: <b>Նշում 11</b>			3	Հղում 1, կետ 47	լաբորատոր	

22.	Վարչակենցաղային շենքերի և լվացման հարթակից հեռացվող կեղտաջրերի հեռացման համակարգը միացված է կենտրոնացված ջրահեռացման համակարգին: Դրա բացակայության դեպքում ապահովվում է կեղտաջրերի հեռացումը ջրանթափանց հիմքով և պատերով (բետոնյա, ցեմենտյա կամ երկաթայնացմամբ սվաղված աղյուս) հորերում /եթե կեղտաջրերի օրական ծավալը չի գերազանցում 1 մ <sup>3</sup> / կամ կեղտաջրերի մաքրման սարքավորումներով ապահովված տեղային կառույց:				3	Հղում 1, կետ 48, Հղում 7, կետ 16, 17	Տեսողական, փաստաթղթային	
23.	Արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար գործոնների ազդեցության հետ կապված, աշխատանքի ընդունվելիս, արդյո՞ք աշխատողները ենթարկվել են պարտադիր նախնական բժշկական զննության:				3	Հղում 1, կետ 83, Հղում 3 , կետ 4.1.4	Փաստաթղթային (Առողջապահական կազմակերպության պաշտոնական փաստաթուղթ)	
24.	Արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար գործոնների ազդեցությանը ենթարկվող աշխատողները արդյո՞ք ենթարկվել են պարտադիր պարբերական բժշկական զննության:				3	Հղում 1, կետ 83, Հղում 3 , կետ 4.1.4	Փաստաթղթային (Առողջապահական կազմակերպության կողմից տրված եզրափակիչ ակտ)	
25.	Պարտադիր պարբերական բժշկական զննության արդյունքում արդյո՞ք հանձնաժողովի կողմից հայտնաբերվել են անձինք, որոնց առողջական վիճակի վերաբերյալ եզրափակիչ ակտում նշվել են՝					Հղում 3, կետ 4.1.4	Փաստաթղթային (եզրափակիչ ակտից)	
25.1	-մասնագիտական թունավորման կամ հիվանդության կասկածով,				3			
25.2	առողջական վիճակի կապակցությամբ ժամանակավորապես այլ աշխատանքի տեղափոխման կարիք ունեցող,				3			
25.3	առողջական վիճակի կապակցությամբ մշտապես այլ աշխատանքի տեղափոխման կարիք ունեցող:				3			
26.	Տեղամասերում արդյո՞ք մեկ աշխատողի համար նախատեսվում է՝					Հղում 3, կետ 3.1-ի 1)	Չափագրում	
26.1	արտադրական սենքի ծավալը՝ 15 մետր խորանարդ,				3			

26.2	արտադրական սենքի տարածքը՝ 5 մետր քառակուսուց ոչ պակաս:				3		
27.	Արդյո՞ք աշխատատեղերում, արտադրական սենքերում և պահեստներում ելնելով կատարվող տեսողական աշխատանքի բնութագրից և նշմարվող օբյեկտի նվազագույն կամ համարժեք չափից, արհեստական, բնական և համատեղված լուսավորումների և համաարդյունաբերական սենքերի և կառուցվածքների լուսավորության նորմավորվող ցուցանիշների մակարդակները համապատասխանում են թույլատրելի նորմին: <b>Նշում 12</b>				2	Հղում 4, կետ 3.3	Գործիքային չափումներ
28.	Արտադրական սենքերի միկրոկլիմայի թույլատրելի ցուցանիշների արժեքներն արդյո՞ք համապատասխանում են նորմերին: <b>Նշում 13</b>				3	Հղում 5, կետեր 5.2, 5.3 և 5.5, աղյուսակ 2	Գործիքային չափումներ
29.	Աշխատատեղերում ձայնային ճնշման մակարդակները արդյո՞ք համապատասխանում են սահմանային թույլատրելի մակարդակներին: <b>Նշում 14</b>				3	Հղում 8, 2-րդ աղյուսակ	Գործիքային չափումներ
30.	Արտադրական տեղամասերի աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի կոնցենտրացիաներն արդյո՞ք համապատասխանում են թույլատրելի նորմին:				3	Հղում 6, կետ 1	Լաբորատոր հետազոտություններ

- Հղում 1.** ՀՀ առողջապահության նախարարի 29.10.2009թ. N20-Ն հրամանով հաստատված «Վտանգավոր քիմիական թափոնների գործածությանը և վտանգավոր քիմիական նյութերի պահպանմանը և փոխադրմանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2.1.7.001-09 սանիտարական կանոններ և նորմեր,
- Հղում 2.** ՀՀ առողջապահության նախարարի 04.03.2008 թ. N 03-Ն հրամանով հաստատված «Բժշկական թափոններ գործածությանը ներկայացվող հիգիենիկ և հակահամաճարակային պահանջներ» N 2.1.3-3 սանիտարական կանոններ և նորմեր և «Բժշկական թափոնների անվտանգ գործածության» ուղեցույց
- Հղում 3.** ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի օգոստոսի 15-ի N 756 հրամանով հաստատված «Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» ՍՆ N 2.2-002-05 Սանիտարական կանոններ և նորմեր
- Հղում 4.** ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի սեպտեմբերի 16-ի N 842 հրամանով հաստատված և «Արտադրական սենքերի միկրոկլիմա» ՍՆ N 2-2.2.4-001-05 Սանիտարական կանոններ և նորմեր
- Հղում 5.** ՀՀ առողջապահության նախարարի 06.12.10թ. N27-Ն հրամանով հաստատված «Կազմակերպությունների աշխատատեղերում աշխատանքային գոտու օդում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները» N2.2.5-004-10 սանիտարական կանոններ և նորմեր:
- Հղում 6.** ՀՀ առողջապահության նախարարի 19.09.2012թ N15-Ն հրամանով հաստատված «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N 2.2.8-003-12 սանիտարական կանոններ և նորմեր:

**Հղում 7.** ՀՀ առողջապահության նախարարի 16.04.09 թ. N 06-Ն «Հասարակական զուգարաններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N 2-III-2.13 սանիտարական կանոններ և նորմեր

**Հղում 8.** ՀՀ առողջապահության նախարարի 06.03.02թ. N 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» N2-III-11.3 սանիտարական նորմեր

### **Նշում 1.**

Վտանգավոր քիմիական թափոնների կուտակման սահմանային քանակությունը չի նորմավորվում I դասի վտանգավորության պինդ թափոնների, խտացված հեղուկ և մածուկանման թափոնների համար, որոնք պահվում են հերմետիկ տարաներում և փակ սենքերում, ուր բացառվում է կողմնակի մարդկանց մուտքը: Վտանգավոր քիմիական թափոնների կուտակման սահմանային քանակությունը չի նորմավորվում II և III դասի սորուն և տրորված թափոնները, որոնք պահվում են հուսալի՝ մետաղական, պլաստիկ, փայտյա և թղթյա տարաներում: Նման դեպքերում թափոնների սահմանային քանակությունը սահմանվում է հաշվի առնելով քիմիական նյութերի անվտանգությանը ներկայացվող ընդհանուր պահանջները: հրդեհապայթյունավտանգավորությունը, բաց կամ կիսաբաց պահպանության պայմաններում ավելի վտանգավոր երկրորդական միացությունների առաջացումը:

Սորուն և ցնդող վտանգավոր քիմիական թափոնները չեն պահպանում բաց վիճակում:

I և II դասի վտանգավորության քիմիական թափոնների ժամանակավոր պահպանումը կատարվում է փակ պահեստներում, ապահովելով դրանց առանձին տեսակների տարածքային մեկուսացում և անջատ պահպանում առանձին մեկուսախցերում, կրկնատակի վրա:

I-ին դասի վտանգավորության արտադրական պինդ թափոնների պահպանումը իրականացվում է բացառապես հերմետիկ տարողություններում (կոնտեյներ, տակառ, ցիստերն):

II-րդ դասի արտադրական պինդ թափոնների պահպանումը՝ հուսալի փակված տարայում (պոլիէթիլենային պարկերում, պլաստիկ ծրարներում),

III-րդ դասի արտադրական պինդ թափոնների պահպանումը իրականացվում է թղթյա, բամբակյա, մանվածքային պարկերում

IV-րդ դասի արտադրական պինդ թափոնների պահպանումը իրականացվում է իրար վրա լցված, կուտակված մարգերի տեսքով: Քիչ վտանգավոր (IV դասի) վտանգավոր քիմիական թափոնները պահեստավորվում են ինչպես կազմակերպության տարածքում, այնպես էլ դրանից դուրս՝ հատուկ պատրաստված, վերահսկելի փորվածքներում և պահեստարաններում:

### **Նշում 2.**

Առկա է համապատասխան տեխնիկական փաստաթուղթ՝ որում հիմնավորվում են կազմակերպության տարածքում վտանգավոր քիմիական թափոնների միաժամանակյա կուտակման (պահեստավորման) առավելագույն սահմանային քանակությունները:

Կազմակերպության տարածքում վտանգավոր քիմիական թափոնների միաժամանակյա կուտակման (պահեստավորման) առավելագույն սահմանային քանակությունը ամեն մի կոնկրետ դեպքում որոշվել է նյութերի հաշվեկշռի, թափոնների զույգագրման հիման վրա՝ հաշվի առնելով դրանց մակրո և միկրո կազմությունները, ֆիզիկաքիմիական հատկությունները, այդ թվում ագրեգատային վիճակը, թունունակությունը և թափոնների բաղադրամասերի (կոմպոնենտների) միգրացիայի մակարդակը մթնոլորտային օդ:

Վտանգավորության տարբեր դասերի վտանգավոր քիմիական թափոնների միաժամանակյա պահպանման համար, դրանց սահմանային թույլատրելի քանակի հաշվարկը որոշվել է առավել վնասակար նյութերի (I և II դասի) առկայությամբ և տեսակարար պարունակությամբ:

### **Նշում 3.**

Վտանգավոր քիմիական թափոնների ոչնչացման, վնասագերծման տեխնոլոգիաներ կիրառող ու թաղման օբյեկտը տեղակայված չէ՝

1) խմելու, տնտեսակենցաղային ջրաղբյուրների և հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանման բոլոր գոտիներում, ջրատարների սան. պահպանման շերտագծում,



- 2) առողջարանների սանիտարական պահպանման գոտիներում,
- 3) բնակավայրերում,
- 4) բնակչության զանգվածային հանգստի գոտիներում,
- 5) ջրատար հորիզոնների մակերևույթ դուրս գալու վայրերում,
- 6) բաց ջրամբարների ջրապահպան գոտիներում,
- 7) ճահճոտ և ջրերով ողողվող տարածքներում
- 8) սողանքների և սելավների գոտիներում:

Հիմնավորվում է համապատասխան փաստաթղթերի առկայությամբ՝ հողամասի և հարող հողատարածքների նպատակային օգտագործման, խմելու, տնտեսակենցաղային ջրաղբյուրների և հանքային ջրերի աղբյուրների սանիտարական պահպանման գոտիների, ջրատարների սան. պահպանման շերտագծի, առողջարանների սան. պահպանման գոտիների, բնակավայրերի, բնակչության զանգվածային հանգստի գոտիների, ջրատար հորիզոնների մակերևույթ դուրս գալու վայրերի, բաց ջրամբարների ջրապահպան գոտիների, ճահճոտ և ջրերով ողողվող տարածքների, սողանքների և սելավների գոտիների բացակայության հիմնավորմամբ, հիդրոերկրաբանական հետազոտությունների՝ ստորերկրյա ջրերի խորության վերաբերյալ, փոռցաշերտի ապարների զտման (ֆիլտրացիայի) գործակցի վերաբերյալ:

#### **Նշում 4.**

Աղբավայրերում մշակված բժշկական թափոններ ընդունելու համար պատրաստվում է առանձին փոս: Բացառվում է կողմնակի անձանց մուտքը առանձնացված տարածքներ՝ ինչպես դրա աշխատանքի ընթացքում, այնպես էլ, երբ աղբավայրը փակ է և չի օգտագործվում օգտագործելով դարպասներ և ցանկապատում: Մշակված թափոնների բեռնաքանակը անմիջապես և ամբողջովին ծածկվում է հողի նվազագույնը՝ 30սմ շերտով և խտացվում հողի 60 սմ վերջնական ծածկույթով:

#### **Նշում 5.**

Բժշկական թափոնի ժամանակավոր վարակազերծման մեթոդներից են կազմակերպության տարածքում թափոնների թաղումը կամ կազմակերպության ներսում ավտոկլավների օգտագործումը: Կազմակերպության տարածքում թափոնների թաղման փոսերը նման են փոքր մասշտաբի սանիտարական աղբավայրերին և կարող են կառուցվել թափոնների փոքր քանակություններ առաջացնող կազմակերպության հետևի կողմում: Փոսը ապահովվում է պատշաճ ջրահեռացմամբ, և չի կարող գտնվել այն տարածքում, որը ջրով է ծածկվում: Փոսի հատակի բարձրությունը գրունտային ջրի մակարդակից թույլատրվում է առնվազն 1.5 մետր: Փոսը տեղադրվում է մոտակա ցանկացած ջրաղբյուրից զառիվար և մոտ 50 մետր հեռու, օրինակ գետակներից: Շինարարության մեթոդն ընդգրկում է. 1) փորել 1-ից մինչև 2 մետր լայնություն և 2-ից 5 մետր խորություն ունեցող փոս, 2) փոսի հատակը ծածկել ջրաանթափանց նյութով, 3) փոսի բերանի շուրջը կառուցել հողապատնեշ՝ մակերեսային ջրերը հորը լցվելուց կանխելու նպատակով, 4) տարածքի շուրջը կառուցել ցանկապատ կամ պատնեշ՝ հեռու պահելով կենդանիներին, աղբը հավաքողներին և երեխաներին, 5) պարբերաբար թափոնների խմբաքանակներ տեղադրել փոսի մեջ և յուրաքանչյուր խմբաքանակ ծածկել հողի 10 սմ շերտով, կամ որպես այլընտրանք, կրի և հողի խառնուրդ կարող է օգտագործվել որպես ծածկող շերտ, և 6) երբ փոսը մոտավորապես 50 սմ զետնի մակերեսից ներքև է լցված, ապա թափոնները ծածկել հողով և ընդմիջտ փակել ցեմենտով: Չնայած փակելու նախընտրելի մեթոդը համարվում է ցեմենտի օգտագործումը, այլընտրանք կարող է լինել մետաղալարե ցանցաշերտի ամրացումը հողի վերջին 50 սմ-անոց շերտի ծածկույթի մեջ: Թաղման փոսը օգտագործում են միայն վարակիչ թափոնների համար և ոչ կենցաղային թափոնների համար՝ թույլ չտալով որ այն արագ լցվի:

Սրածայրերը հատուկ դեպք են: Նույնիսկ եթե նրանք վարակազերծվում են ավտոկլավի մեջ, ապա դրանք չեն խառնվում կենցաղային թափոնների հետ, եթե վերջիններս պատշաճ կերպով չեն հեռացվում դեպի վերահսկվող աղբավայր: Հակառակ դեպքում, դրանք ջարդվում են: Մեկ այլ ժամանակավոր լուծում է հանդիսանում թաղումը սրածայրերի փոսում: Սրածայրերի փոս կառուցելու համար կարող են օգտագործվել բետոնի սնամեջ բլոկներ 10 մմ ունեցող արմատուրային կաղապարածողերի հետ միասին, որոնց միջև հավասարաչափ տարածություն է թողնված ամեն 0.4 մ-ի վրա: Ցեմենտի, ավազի և

տեսակավորված մանրախճի խառնուրդ է լցվում՝ 0.1 մ ունեցող պատեր և սալաքարեր ձևավորելու համար: Գծապատկերը ցույց է տալիս սրածայրերի մեծ փոսի ընդհանուր ուրվագիծը: Կառուցվածքը կարող է մասշտաբով փոքրացվել՝ կախված կազմակերպության չափից և տարեկան առաջացող սրածայրերի հաշվարկված քանակից:

### **Նշում 6**

Անհրաժեշտ է մշակել թափոնների տեղափոխությունը գրանցող համակարգ, որպեսզի հնարավոր լինի փաստաթղթերով հիմնավորել թափոնների շարժը կազմակերպությունից մինչև իր վերջնական նպատակատեղ: Մեքենան ունենում է արտահոսելու նկատմամբ դիմացկուն, ամբողջապես ծածկված, անվտանգ բեռնարկղեր, որոնք նախատեսված են կանխելու թափոնների թափվելը կամ արտահոսքը փոխադրման ժամանակ: Մեքենայի վարորդը կարող է վտանգավոր քիմիական թափոններ փոխադրել հատուկ ուսուցում անցնելուց հետո: Վարորդին ուսուցանվում է թափոնների թափվելը մաքրելով սրբելու և պատահարի մասին հաղորդելու ընթացակարգերի մասին՝ ըստ կարգավորող ղեկավար մարմնի կողմից հաստատված անկանխատեսելի դեպքերին վերաբերող ծրագրի: Ծրագիրը նախատեսում է դժբախտ պատահարների վարման հատուկ ընթացակարգ տարբեր դեպքերի համար, այդ թվում նաև թափոնների պատահական դուրս թափվելը: Փոխադրողը թափոնները վերցնելիս գրավոր փաստաթուղթ է ներկայացնում առողջապահական հաստատությանը: Առողջապահական կազմակերպությունը պահում է ստացականները որպես գրանցումների պահման մաս և ներկայացնում իրականացվող տեսչական ստուգումների ժամանակ:

### **Նշում 7**

Բժշկական թափոնների՝ բացառությամբ վարակիչ միկրոկենսաբանական թափոնների և միկրոկենսաբանական հեղուկների հատուկ տարողությունները ունեն ‘Բժշկական վտանգավոր թափոններ’ մակնշումը: Վարակիչ միկրոկենսաբանական թափոնների հավաքման տարողությունները ունեն ‘Վարակիչ թափոն’ մակնիշը և կենսաբանական վտանգի նշանը: Սրածայր թափոնների մեկանգամյա օգտագործման կարծր բեռնարկղը ունի կենսաբանական վտանգի նշանը և ‘Զգույշ սրածայրեր’ մակնշումը: Կենսաբանական հեղուկների տեղադրման տարողությունները ունեն կենսաբանական վտանգի նշանը և ‘Վարակիչ թափոն’ մակնշումը: Ախտաբանաանատոմիական թափոնները տեղադրվում են կարծր, կափարիչ ունեցող, դիմացկուն, արտահոսք չունեցող կենսաբանական վտանգի նշան և ‘Վարակիչ թափոն’ մակնշում ունեցող մեկանգամյա կամ բազմակի օգտագործման հատուկ տարողությունների մեջ:

Վտանգավոր քիմիական թափոնների պահման օբյեկտը մշտադիտարկվում է ամեն օր՝ վստահ լինելու համար, որ ոչ մի բեռնարկղ արտահոսք չունի: Եթե փակված տարողությունը որևէ կերպ վնասվել է, ապա այն տեղադրվում է ավելի մեծ տարողության կամ բեռնարկղի մեջ և փակվում չվնասելով սկզբնական կնիքը:

Բժշկական թափոնի ժամանակավոր պահման հատուկ տարածքում վարվող մատյանում նշվում է թափոնի տեսակը, դրա ժամանակավոր պահման հատուկ տարածքում տեղադրման սկիզբը և ժամանակավոր պահման հատուկ տարածքից փոխադրելու ամսաթիվը:

Վարակիչ /Հոտեր, նեխում առաջացնող թափոնների (թափոններ, որոնք մի քանի օր հետո կարող են նեխել և հոտեր առաջացնել, ինչպես օրինակ՝ ախտաբանաանատոմիական թափոնները) թափոնները եթե չկա սառեցվող պահեստային սենյակ ժամանակավոր պահման հատուկ տարածքում թափոնները պահվում են ձմռանը՝ 72 ժամից, իսկ ամռանը՝ 48 ժամից ոչ ավել:

Մատյանում գրանցումներ կատարում են միայն բժշկական թափոնը հավաքելու, տեղադրելու և տեղափոխելու պարտականություն ունեցող աշխատողները՝ համապատասխան աշխատանքները կատարելու ընթացքում:

### **Նշում 8**

Գրանցումները պահպանվում և ներկայացվում են կարգավորող մարմինների տեսչական ստուգումների ժամանակ:

Իրականացվում են այրման վառարանի այրման խցի ջերմաստիճանի, O<sub>2</sub> կոնցենտրացիայի, ճնշման, ջերմաստիճանի, և բանեցրած գազի ջրի գոլորշիի պարունակության շարունակական չափումներ

**Նշում 9.**

Վտանգավոր քիմիական թափոնների հետ շփվող անձինք, որոնք իրականացնում են ընդունում, մատակարարում, բեռնում և բեռնաթափում, ապահովվում են անհատական պաշտպանության միջոցներով՝ արտահագուստ, հատուկ կոշիկներ, շնչադիմակ, հակագազ, պաշտպանիչ ակնոցներ, ձեռնոցներ և/կամ թաթափաններ, հակագազերի և շնչադիմակների հետ տրվում են պահուստային պարկուճներ և տուփեր: Անհատական պաշտպանության միջոցները ընտրվում են՝ հաշվի առնելով թափոնի վտանգավորության դասը և ֆիզիկաքիմիական հատկությունները, աշխատանքի պայմանների բնույթը, ինչպես նաև աշխատողների անհատական չափսերը:

**Նշում 10.**

Սանիտարական սարքավորումների, վացարանների, հատակի, պատերի ախտահանման (երկնվազ սրբում, ողողում ջրով) համար օգտագործվում է 1%-ոց քլորամին Բ, վացոդ-ախտահանող միջոցներ՝ 5 գ. 100սմ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, 0.5-%-անոց վացոդ նյութի և քլորամին Բ-ի խառնուրդ, կալցիումի հիպոքլորիդի (0.5%) կամ Առողջապահության նախարարության կողմից սահմանված կարգով թույլատրված համարժեք այլ լուծույթներ:

**Նշում 11.**

Կենտրոնացված ջրամատակարարումը կարող է լինել կոմունալ /եթե սպասարկում է որևէ մասնագիտացված կազմակերպություն/ կամ գերատեսչական: Գերատեսչական ջրմուղը իրենից ներկայացնում է տվյալ օբյեկտին ջուր մատակարարող առանձին համակարգ՝ որը կազմված է առնվազն ջրամատակարարման աղբյուրից, ջրատարից, շենք-շինությունների ներքին ցանցից, ջրի վարակազերծման, անհրաժեշտության դեպքում՝ մաքրման կառույցից, կարող է լինել նաև ՕԿՋ Սպասարկումը կազմակերպվում է անմիջապես տվյալ օբյեկտի կողմից: Անհրաժեշտ է պարզել արդյոք առկա է կենտրոնացված համակարգով տրվող խմելու ջրի պահուստային տարողություն: Վերջինիս առկայության դեպքում նմուշները վերցնում են մինչև պահուստային տարողությունը և դրանից հետո, եթե ջրի որակը փոխվում է պահուստային տարողություն մտնելուց հետո՝ առկա է երկրորդային աղտոտում: Զրի նմուշները հետազոտվում է մանրէաբանական և զգայորոշման ցուցանիշներով:

**ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՆՐԷԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՄԱԿԱՐՈՒԾԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ**

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմաներ
Ջերմատուրերանտ կոլիֆորմ մանրէներ 1/	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Ընդհանուր կոլիֆորմ մանրէներ	100 մլ-ում մանրէների քանակ	Բացակայություն
Մանրէների ընդհանուր քանակություն կոլիֆագեր 3/	Գաղութներ առաջացնող մանրէների քանակը 1 մլ-ում	50-ից ոչ ավել
Սուլֆիտվերականգնող կլոստրիդիանների սպորներ 4/	Վահանակ առաջացնող միավորների (ՎԱՄ) քանակը 100 մլ-ում	Բացակայություն
Լյամբլաների ցիստեր 3/	Սպորների քանակը 20 մլ-ում	Բացակայություն
	Ցիստերի քանակը 50 մլ-ում	Բացակայություն

**ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ԶԳԱՅՈՐՈՇԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՆՈՐՄԵՐ**

Ցուցանիշներ	Չափման միավորներ	Նորմեր, ոչ ավելի
Հոտ	բալեր	2
Համ	-//-	2
Գունավորում	աստիճաններ	20 /35/ 1)
Պղտորություն	ՖՊՄ (ըստ ֆորմազինի) պղտորության միավոր կամ մգ/լ (ըստ կառլինի)	2.6 /35/ 1) 1.5 /2/ 1)

**Նշում 12.** Աշխատատեղերում և արտադրական սենքերում ելնելով կատարվող տեսողական աշխատանքի բնութագրից և նշարվող օբյեկտի նվազագույն կամ համարժեք չափից, արհեստական, բնական և համատեղված լուսավորումների և համաարդյունաբերական սենքերի և կառուցվածքների լուսավորության նորմավորվող ցուցանիշների սահմանային թույլատրելի մակարդակները՝

Աղյուսակ 15

**Լուսավորման նորմավորվող ցուցանիշները**

Տեսողական աշխատանքի բնութագիրը	Նշարվող օբյեկտի նվազագույն կամ համարժեք չափը, մմ	Տեսողական աշխատանքի կարգը	Տեսողական աշխատանքի ենթակարգը	Օբյեկտի ցայտունությունը ֆոնով	Ֆոնի բնութագիրը	Արհեստական լուսավորում					Բնական լուսավորում		Համատեղված լուսավորում	
						Լուսավորվածությունը, լք					ԲԼԳ,%			
						Լուսավորման համակցված համակարգի դեպքում		Ընդհանուր լուսավորման համակարգի դեպքում		Շլացման ցուցանիշի և բաբախման գործակցի նորմավորվող մեծությունների գույակցումը	Վերին կամ համակցված լուսավորման դեպքում	Կողմնային լուսավորման դեպքում	Վերին կամ համակցված լուսավորման դեպքում	Կողմնային լուսավորման դեպքում
Ընդամենը	այդ թվում ընդհանուրից	P	KH, %											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ամենաբարձր ճշտության	0.15-ից պակաս	I	ա	Փոքր	Մուգ	5000	500	-	20	10	-	-	6.0	2.0
						4500	500	-	20	10				
						4000	400	1250	20	10				
						3500	400	1000	10	10				
						2500	300	750	20	10				
բ	Փոքր Միջին	Բաց Միջին Մուգ	2000	200	600	10	10							
			1500	200	400	20	10							
			1250	200	300	10	10							
գ	Փոքր Միջին Մեծ	Բաց Միջին Մուգ	1500	200	400	20	10							
			1250	200	300	10	10							
դ	Միջին Մեծ *	Միջին *	1500	200	400	20	10							
			1250	200	300	10	10							
Շատ բարձր ճշտության	0.15-ից մինչև 0.30	II	ա	Փոքր	Մուգ	4000	400	-	20	10				
						3500	400	-	10	10				

			բ	Փոքր Միջին	Միջին Մուգ	3000 2500	300 300	750 600	20 10	10 10				
			գ	Փոքր Միջին	Բաց Միջին Մուգ	2000	200	500	20	10	-	-	4.2	1.5
			դ	Միջին Մեծ *	Բաց * Միջին	1500	200	400	10	10				
						1000	200	300	20	10				
						750	200	200	10	10				
Բարձր ճշտության	0.30-ից մինչև 0.50	III	ա	Փոքր	Մուգ	2000 1500	200 200	500 400	40 20	15 15				
			բ	Փոքր Միջին	Միջին Մուգ	1000 750	200 200	300 200	40 20	15 15				
			գ	Փոքր Միջին Մեծ	Բաց Միջին Մուգ	750 600	200 200	300 200	40 20	15 15	-	-	3.0	1.2
			դ	Միջին Մեծ *	Բաց * Միջին	400	200	200	40	15				
Միջին ճշտության	0.50-ից մինչև 1	IV	ա	Փոքր	Մուգ	750	200	300	40	20				
			բ	Փոքր Միջին	Միջին Մուգ	500	200	200	40	20				
			գ	Փոքր Միջին Մեծ	Բաց Միջին Մուգ	400	200	200	40	20	4	1.5	2.4	0.9
			դ	Միջին Մեծ *	Բաց * Միջին	-	-	200	40	20				
Փոքր ճշտության	1-ից մինչև 5	V	ա	Փոքր	Մուգ	400	200	300	40	20				
			բ	Փոքր Միջին	Միջին Մուգ	-	-	200	40	20				
			գ	Փոքր Միջին Մեծ	Բաց Միջին Մուգ	-	-	200	40	20	3	1	1.8	0.6
			դ	Միջին Մեծ *	Բաց * Միջին	-	-	200	40	20				
Կոպիտ (շատ փոքր ճշտության)	5-ից ավել	VI		անկախ ֆոնի և ֆոնով օբյեկտի ցայտունության բնութագրից	-	-	200	40	20	3	1	1.8	0.6	
Աշխատանք տաք արտադրամասերում լուսատու նյութերի և շինվածքների	0.5-ից ավել	VII		Նույնը	-	-	200	40	20	3	1	1.8	0.6	

հետ													
Արտադրական գործընթացներ ընթացքի ընդհանուր դիտարկում,		VIII											
մշտական	ա	-“-	-	-	200	40	20	3	1	1.8	0.6		
պարբերական սենյակում մարդկանց մշտական կացության դեպքում	բ	-“-	-	-	75	-	-	1	0.3	0.7	0.2		
պարբերական սենյակում մարդկանց պարբերական կացության դեպքում	գ	-“-	-	-	50	-	-	0.7	0.2	0.5	0.2		
ինժեներական հաղորդակցումների ընդհանուր դիտարկում	դ	-“-	-	-	2	-	-	0.3	0.1	0.2	0.1		

Ծանոթություններ:

1. Նորմերի 1 ա-ից մինչև 3 գ ենթակարգերի համար կարող է ընդունվել տվյալ ենթակարգի համար 7-11 սյունակներում բերված նորմավորվող ցուցանիշների լրակազմերից մեկը:
2. Նշմարվող օբյեկտի նվազագույն չափերը եւ համապատասխանաբար դրանց տեսողական աշխատանքի ենթակարգերը սահմանված են աշխատողի աչքերից 0,5 մ-ից ոչ ավել հեռավորության վրա նշմարվող օբյեկտի տեղաբաշխման դեպքում:
3. 1-3, 4բ, 4գ, 5ա կարգերի համար ընդհանուր լուսավորման համակարգի նախատեսումը թույլատրվում է միայն տեխնիկական անհնարինության կամ համակցված լուսավորման համակարգի կիրառման տնտեսական աննպատակահարմարության դեպքում:

Նշում 13. Արտադրական սենքերի միկրոկլիմայի ցուցանիշների սահմանային թույլատրելի մակարդակները



1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1.	Ստեղծագործական գիտական գործունեություն, նախագծում, ծրագրավորում, դասավանդում և ուսուցում, բժշկական գործունեություն: Նախագծակոնստրուկտորային գրասենյակներում, հաշվիչ մեքենաների-ծրագրավորողների, տեսական աշխատանքների և տվյալների վերամշակման լաբորատորիաներում բուժկետերի հիվանդների ընդունման սենյակներում	86	71	61	54	49	45	42	40	38	50
2.	Կենտրոնացում պահանջող բարձրորակավորման աշխատանք, ադմինիստրատիվ ղեկավար գործունեություն, լաբորատորիաներում չափիչ և անալիտիկ աշխատանքներ, աշխատատեղեր արտադրամասի կառավարման ապարատի շինություններում, գրասենյակների աշխատանքային սենյակներում, լաբորատորիայում	93	79	70	68	58	55	52	52	49	60
3.	Աշխատանք, որը կատարվում է հաճախակի ստացվող ցուցումներով և ձայնային ազդանշաններով, մշտական լսողական վերահսկողություն պահանջող աշխատանք հրահանգով, ըստ ճշգրիտ գրաֆիկի օպերատորային աշխատանք, դիսպետչերական աշխատանք: Աշխատատեղեր դիսպետչերական ծառայության սենքերում, հեռախոսով խոսակցական կապով դիտարկման և հեռավահանակային կառավարման կաբինետներում և սենքերում, մեքենագրական գրասենյակներում, ճշգրիտ հավաքման տեղամասերում, հեռախոսային և հեռագրային կայաններում, վարպետների տեղամասերում, հաշվիչ մեքենաների տեղեկատվության մշակման դահլիճներում	96	83	74	68	63	60	57	55	54	65
4.	Աշխատանք, որը պահանջում է կենտրոնացում, արտադրական ցիկլերի դիտարկման և հեռավահանակային գործընթացների ղեկավարման ավելացված պահանջներով աշխատանք, առանց խոսակցակառավարման աշխատասենյակներում վահանակով աշխատատեղեր, աղմուկ առաջացնող սարքավորումներով լաբորատորիասենյակներում, հաշվիչ մեքենաների աղմուկ առաջացնող սենյակներում, ագրեգատների տեղադրման շենքերում	103	91	83	77	73	70	68	66	64	75
5.	Բոլոր տեսակի աշխատանքների կատարում	107	95	87	82	78	75	73	71	69	80



(բացառությամբ 1-4 կետերում թվարկածից և նրանց համանման) արտադրական սենքերի և կազմակերպությունների տարածքների մշտական աշխատատեղերում										
--	--	--	--	--	--	--	--	--	--	--

Տեսուչի ստորագրությունը \_\_\_\_\_

Տնտեսվարողի ստորագրությունը \_\_\_\_\_